

Յովհաննիսեան, որ այս մանրամասնութիւնները կ'աւանդէ (ձեռագիր Տր. Վ. Թորգոմեանի), «Համեղաքարոզ. Սարաֆեանի այս դամբանականը հետեւեալ կերպով կը յիշատակէ. Սարգիս Արքեպ. «սկսաւ մեծաւ հառաչմամբ, եւ սրտառուչ կերպիւ, արտասուածօր աչօք, եւ հեկեկեալ ձայնիւ, աւաղել եւ ողբալ զՄարդկային բնութեան լպրծիւն եւ անկայիւն լինելն ի վերայ երկրի եւ միշտ ի հոսման եւ ի ծորման գոլն ի սկզբանէ մինչեւ ցկատարած, եւ զաշխարհիս ունայնութենէն, եւ զսին սաղարթիւք պաճուճնցեալ զլիննյութենէն, եւս եւ յունայն եւ ի նանիր իբր առ աչօք եղեալ զհեշտութենէն՝ դսրովեալ ամբաստանեաց, բերելով զօրինակս շահաւետս, եւ զառակս օգտատուս եւ զխրատս: Եւ յետոյ զմիայն գովասանութեան միանգրն եւ նպատակն, եւ օգտաբեր շահաւետութեան արժանին եւ ընդունելին, այսինքն՝ զաստուածային առաքինութիւնսն գովելով գովեաց եւ ներբողեաց, եւ այսու կերպիւ մխիթարեաց սիրտինաց եւ զովացուցեալ ապահովացոյց զժողովուրդն սակաւիկ ինչ:

«Եւ յաղագս հանգուցելոյն սկսաւ ասել այսպէս. Եղբարք իմ սիրելիք, ահա արդ տեսէք, մեր մեծապատիւ եւ սիրելի հոգեւոր սրբազան Հայրն լուսահոգի՝ թէ որպէս վճարեաց զկեանս իւր, եւ զմեզ զամենեսին որբացոյց իրաւի եւ կաթոգնեալ միջաբեկս արար. եւ արդ տեսէք թէ որպէս ակունքն իւր լուսաւորք՝ զորս ունէրն երեկն եւ եռանդն, այժմ՝ դադա-